

**ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ**

«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-1194-18.11.2025-SSԳՇ-011/0), «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-1194¹-18.11.2025-SSԳՇ-011/0) և «Շուկայի վերահսկողության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-1194²-18.11.2025-SSԳՇ-011/0) վերաբերյալ

Կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-1194-18.11.2025-SSԳՇ-011/0), «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-1194¹-18.11.2025-SSԳՇ-011/0) և «Շուկայի վերահսկողության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-1194²-18.11.2025-SSԳՇ-011/0) (այսուհետ միասին՝ Նախագծերի փաթեթ) մասնագիտական փորձաքննության են ենթարկվել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչությունում:

Նախագծերի փաթեթը ենթարկվել է իրավական, ֆինանսատնտեսագիտական, սոցիալական փորձաքննության:

Ստորև ներկայացվում է մասնագիտական փորձաքննության եզրակացությունը, ինչպես նաև Նախագծերի փաթեթին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանքը:

Իրավական փորձաքննության արդյունքները

Նախագծերի փաթեթի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (այսուհետ՝ Սահմանադրություն) և օրենքների պահանջներին համապատասխանության տեսանկյունից նշենք հետևյալը.

1. «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին հոդվածով նախատեսվում է «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածը լրացնել նոր պարբերությամբ, որը շարադրվում է որպես 31-րդ կետ: Հարկ ենք համարում նշել, որ Օրենքի 2-րդ հոդվածը բաղկացած է երկու մասերից, որի 1-ին մասում սահմանված են Օրենքի իմաստով առևտրի հիմնական հասկացությունները: Մինչդեռ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասն արդեն իսկ պարունակում է 31-րդ կետ: Ուստի անհրաժեշտ է վերանայել Նախագծի 1-ին հոդվածով Օրենքի 2-րդ հոդվածում նախատեսվող լրացումը՝ կատարելով Օրենքի 2-րդ հոդվածի բաղկացուցիչ մասերին համապատասխան ճիշտ հղում: Նշենք, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն. *«Հղումները կատարվում են հստակ և ուղղակի»*, իսկ նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն. *«Օրենսդրական ակտի կրճատ անվանումը, ակտի հոդվածի հերթական համարը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև հոդվածի մասի համարը, հոդվածի մասի կետի կամ ենթակետի համարը»*:

2. Նախագծի 3-րդ հոդվածի վերնագիրն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված պահանջը, որի համաձայն. *«Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի»*:

3. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 158-րդ հոդվածը նախատեսվում է լրացնել նոր՝ 12.1-ին մասով, որի 3-րդ պարբերության «Սույն հոդվածով» բառերն առաջարկում ենք փոխարինել «Սույն մասով» բառերով՝ հիմք ընդունելով այն

հանգամանքը, որ դրանով վարչական պատասխանատվություն է նախատեսվում ոչ թե Օրենսգրքի 158-րդ հոդվածով նախատեսված բոլոր արարքները կրկին կատարելու համար, այլ միայն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով Օրենսգրքի 158-րդ հոդվածում լրացվող նոր՝ 12.1-ին մասով նախատեսված արարքը կրկին կատարելու համար:

Եզրահանգում

Ամփոփելով փորձաքննության արդյունքները՝ կարող ենք նշել, որ Նախագծերի փաթեթով սահմանված կարգավորումներում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության տեսանկյունից խնդրահարույց նորմեր առկա չեն:

Միաժամանակ, ներկայացված առաջարկությունների հիման վրա, անհրաժեշտ է ապահովել Նախագծերի փաթեթով սահմանված իրավակարգավորումների համապատասխանությունը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքին:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Կատարողներ՝ Ն. Ներսիսյան (հեռ.՝ 011-513-248),

Մ. Սարգսյան (հեռ.՝ 011-513-248)

09.12.2025թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

**Նախագծերի փաթեթին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման
ընդունման անհրաժեշտության բացակայության մասին**

Նախագծերի փաթեթին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման
ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Կատարողներ՝ Ն. Ներսիսյան (հեռ.՝ 011-513-248),

Մ. Սարգսյան (հեռ.՝ 011-513-248)

09.12.2025թ.

Ֆինանսատնտեսագիտական փորձաքննության արդյունքները

Ներկայացված Նախագծերի փաթեթով առաջարկվում է սահմանել նոր հասկացություն՝ «մեկանգամյա օգտագործման պլաստիկ արտադրանք»՝ հիմք ընդունելով որոշակի պլաստիկ արտադրանքի շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցման մասին ԵՄ 2019/904 հրահանգով սահմանված համապատասխան հասկացությունը, իսկ մանրածախ առևտուր իրականացնելիս պոլիէթիլենային պարկերի և տոպրակների օտարման արգելքը տարածել նաև թաղանթի 50 միկրոնից ավելի հաստություն ունեցող պոլիէթիլենային պարկերի և տոպրակների (բացառությամբ՝ կշռափաթեթավորման համար օգտագործվող պարկերի, ինչպես նաև աղբի համար նախատեսված երկրորդային հումքից արտադրված պարկերի), մեկանգամյա օգտագործման պլաստիկ (այդ թվում՝ փրփրապլաստից պատրաստված) արտադրանք հանդիսացող տարաների (բացառությամբ՝ կշռափաթեթավորման համար օգտագործվող կափարիչով պլաստիկից տարաների), ափսեների, բաժակների, բաժակի կափարիչների, գդալների, պատառաքաղների, դանակների, ըմպելու կամ խառնելու համար նախատեսված ձողիկների վրա: Բացի այդ, առաջարկվում է նաև նշված կարգավորումները համապատասխանեցնել ՀՀ հարկային օրենսգրքի պահանջներին, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում ավելացնել կոնկրետ պատասխանատվության տեսակ և սահմանել «դիտարկում» հասկացությունը՝ որպես վերահսկողության տեսակ ու դրա կիրառման կարգը:

Ֆինանսատնտեսագիտական հիմնախնդիրների տեսնկյունից հարկ ենք համարում նշել, որ առաջարկվող կարգավորումների կիրառման արդյունքում ամենայն

հավանականությամբ կավելանա սպառողների ֆինանսական բեռը, քանի որ պոլիէթիլենային պարկերի և տոպրակների բացակայությունն անխուսափելիորեն հանգեցնելու է դրանց այլընտրանքների կիրառման (որոնք, որպես կանոն, ավելի թանկ են արժենում, քան պոլիէթիլենային պարկերն ու տոպրակները), և որոնք նույնպես վաճառվելու են սպառողներին՝ գնվող մյուս ապրանքների հետ միասին: Սակայն խնդիրը կայանում է ոչ միայն նրանում, որ սպառողների համար լրացուցիչ ֆինանսական բեռ է ավելանում, այլև նրանում, որ գլոբալ խնդիրը՝ մեկանգամյա օգտագործման պոլիէթիլենի և պլաստիկի շրջակա միջավայր արտանետումը, այդպես էլ լուծում չի ստանում, քանի որ այդ լուծումը գլխավորապես պոլիէթիլենի և պլաստիկի համատարած հավաքագրման և վերամշակման մեջ է:

Եզրահանգում

Նախագծերի փաթեթը ֆինանսատնտեսագիտական հիմնահարցերի տեսանկյունից լրամշակման կարիք չունի:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

ԱՐԹՈՒՐ ԹԱՍԱԶՅԱՆ

(հեռ.՝ 011 513-668)

26.11.2025թ.

Սոցիալական փորձաքննության արդյունքները

Կառավարության կողմից ներկայացվել են ««Առևտրի և ծառայությունների մասին օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և ««Շուկայի վերահսկողության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերը (այսուհետ՝ Նախագծերի փաթեթ):

Ըստ Նախագծերի փաթեթին կից ներկայացված հիմնավորման՝ Նախագծերի փաթեթի ընդունման արդյունքում ակնկալվում է, որ՝

- նպաստավոր պայմաններ կստեղծվեն երկրում մեկանգամյա պլաստիկ արտադրանքի լայն թիրախային խմբի գործածության աստիճանական նվազեցման ու դրա հետևանքով պլաստիկ թափոնների ծավալների կրճատման համար, ինչը կբերի շրջակա միջավայրի և դրա բաղադրիչների աղտոտման նվազեցմանը, հանրապետության էկոլոգիական վիճակի բարելավմանը.
- մանրածախ առևտուր իրականացնելիս պոլիէթիլենային պարկերի ու տոպրակների՝ անկախ հաստությունից, տրամադրման և առկայության արգելքի սահմանման արդյունքում կվերանա վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից համապատասխան չափիչ սարքերի (միկրոմետրների) ձեռքբերման, դրանց հետագա շահագործման կամ սպասարկման, ինչպես նաև դրանց հետ կապված ծախսերի կատարման անհրաժեշտությունը.
- տեղական ինքնակառավարման մարմինների և Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի համատեղ վերահսկողությունն էականորեն կնպաստի մեկանգամյա պլաստիկ արտադրանքի թիրախային խմբի ապրանքների մասով արգելքի պահանջի խախտման դեպքերի բացահայտման ու կանխարգելման գործընթացին.
- մեկանգամյա օգտագործման պլաստիկ արտադրանքի, ինչպես նաև ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների գործածության կրճատմանն ուղղված օրենսդրական սահմանափակումների հետ կապված խախտումների կանխման կամ բացահայտման նպատակով դիտարկումը կիրականացվի առանց նախնական ծանուցման, որը կնպաստի վերոնշյալ խախտումների կանխման կամ բացահայտման արդյունավետության էական բարձրացմանը և այլն:

Չնայած այն հանգամանքին, որ մեկանգամյա պլաստիկ արտադրանքի արգելքը թվում է էկոլոգիական խնդրի լուծման պարզ եղանակ, այդուհանդերձ միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ պլաստիկ սպասքի վաճառքի (առկայության) արգելքը կարող է հանգեցնել ինչպես էկոլոգիական, այնպես էլ սոցիալական, առողջապահական և սանիտարական մի շարք ոչ բարենպաստ հետևանքների: Օրինակ, թղթե բաժակները հաճախ ունենում են պոլիէթիլենային թաղանթ, ինչը դժվարությամբ է վերամշակվում, բացի

այդ, պոլիէթիլէնային թաղանթով թղթե բաժակների օգտագործումը չի խրախուսվում՝ առողջապահական նկատառումներից ելնելով: Առհասարակ, թղթե կամ բամբուկային ալյընտրանքները ոչ միշտ են էկոլոգիապես կամ առողջապահական տեսանկյունից ապահով, եթե օրինակ, չունեն համապատասխան սերտիֆիկացում, պարունակում են մելամին, ինչպես նաև ֆորմալդեհիդ խեժեր և այլն: Բամբուկից, եգիպտացորենի օսլայից և այլ հումքից պատրաստված արտադրանքն ավելի մեծ ռեսուրսներ է պահանջում (ջուր, էլեկտրաէներգիա և այլն), թղթից և կարտոնից արտադրանքին զանգվածային անցումը կհանգեցնի անտառների հատման ավելացմանը: Ինչ վերաբերում է բազմակի օգտագործման սպասքին, ապա դրա օգտագործման դեպքում այն անհրաժեշտ է լվանալ, ինչը որոշ դեպքերում՝ օրինակ տոնավաճառների, փառատոնների կազմակերպման դեպքում, շատ դժվար է ապահովել կամ հնարավոր չէ ապահովել որակյալ լվացումը:

Այսպիսով, պլաստիկ արտադրանքի փոխարինումը ալյընտրանքային արտադրանքով կբարելավի էկոլոգիական վիճակը միայն համապատասխան հումքի վերամշակման և արտադրանքի որակի վերահսկողության անհրաժեշտ ենթակառուցվածքների առկայության դեպքում:

Վերոնշյալի համատեքստում առաջարկում ենք սահմանել/խստացել պատժամիջոցները՝ տնտեսվարողների կողմից օրենսդրությամբ սահմանված պահանջներին չհամապատասխանող արտադրանք (մասնավորապես, պլաստիկ սպասքին փոխարինող ալյընտրանքային արտադրանք) արտադրելու և վաճառելու համար:

Եզրահանգում

Հաշվի առնելով վերոնշյալը՝ կարծում ենք, որ Նախագծերի փաթեթը որոշ լրամշակման կարիք կունենա:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ, ԿՐԹԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝

ԼԻԼԻԹ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Հեռ. /011/ 513 235 ներք. /1618/

09.12.2025թ.